DOI: 10.54503/1829-4324.2025.2-221

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 07.11.25, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.25, երաշխավորվել է տպագրության՝ 24.12.25

Ներածություն: Դարի տնտեսական և սոցիալական զարգացման առանցքային գործոնը տեխնոլոգիական նորարարությունն է: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը, արհեստական բանականության կիրառությունները և թվային ծառայությունների գլոբալիզացիան փոխում են համաշխարհային տնտեսության կառուցվածքը: Այս համատեքստում Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը դիտարկվում է որպես տնտեսության աճի շարժիչ և միջազգային մրցունակության կարևորագույն գործոն: Երկրի դիրքերը գլոբալ տեխնոլոգիական քարտեզում ամրապնդելու համար այսօր ավելի համակարգված ու համալիր թե տեսական-մեթոդաբանական, թե գործնական քաղաքականության իրականացման մոտեցումներ են պահանջվում, որով պայմանավորված է **հոդվածի արդիականությունը:**

Հոդվածի նպատակն է գնահատել Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի ներկա իրավիճակը գլոբալ զարգացումների համատեքստում և առաջարկել ուղղություններ, որոնք կարող են բարձրացնել Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի մրցունակությունը միջազգային մակարդակում:

Նպատակի լուծման համար դրվել են հետևյալ **խնդիրները.**

- տեխնոլոգիական ոլորտի զարգացումների համեմատական գնահատական տալ տարածաշրջանային և գլոբալ միտումների համատեքստում.
- ներկայացնել ստարտափների դերը և ազդեցությունը Հայաստանի միջազգային վարկանիշի վրա.
- վերլուծել Հայաստանի ՏՀՏ և ստարտափ էկոհամակարգի աճի դինամիկան.
- բացահայտել պետական քաղաքականության, կրթության և ներդրումային միջավայրի դերակատարությունը երկրի գլոբալ տեխնոլոգիական առաջընթացում:

Գրականության ակնարկ: Ռ.Բալդվինի կարծիքով ՏՀՏ զարգացումը փոքր երկրներին հնարավորություն է տալիս ինտեգրվել գլոբալ արժեքային շղթաներին՝ առանց մեծ արդյունաբերական ներուժի[1]: Կ.Պերեսի տեխնոլոգիական հեղափոխությունների տեսությունը ընդգծում է, որ նման երկրները կարող են կիրառել «ցատկման» ռազմավարություն՝ շրջանցելով զարգացման դասական

[1] Baldwin, R. (2019). *The Globotics Upheaval: Globalization, Robotics, and the Future of Work*. Oxford University Press.

փուլերը[2]: Իսկ ըստ Ս.Ն.Ռաստվորցևայի «զարգացման նախորդ հետագծից հեռանալ հնարավոր է միայն տեխնոլոգիական ինովացիաների միջոցով, որոնք պատասխանատու են նորարարական տնտեսության առաջացման համար»[3]: Ըստ Քեննանի տեխնոլոգիան երեք տեսակի է. գործարքային տեխնոլոգիաներ, որոնք ներառում են համակարգեր և լուծումներ՝ հեշտացնելով շուկայական գործարքները, էլեկտրոնային առևտրի հարթակները, տեղեկատվական տեխնոլոգիաներ՝հաճախորդների հետ հարաբերությունների կառավարում, ձեռնարկությունների ռեսուրսների պլանավորում և արհեստական բանականություն, գործառնական տեխնոլոգիաներ՝ տվյալների փոխանակում սարքերի միջև և ամպային տեխնոլոգիաներ, ներառյալ ինտերնետը[4]: Աշխարհում տեխնոլոգիական միջավայրի զարգացման վրա ներկայումս առանձնակի ազդեցություն ունեն երկու առանցքային գործոններ: Առաջինը «արհեստական բանականության» լայնածավալ կիրառումն է, որը միջազգային գիտական և գործնական համայնքների կողմից արդեն իսկ գնահատվում է որպես վերջին տասնամյակների ամենակարևոր տեխնոլոգիական առաջընթացներից մեկը[5]: Սա հատկապես կարևոր է «մարդու և մեքենայի համագործակցության դեպքում, որտեղ երկուսն էլ կարող են ցուցադրել իրենց համեմատական առավելությունները»[6]: Տնտեսական աճի վրա ազդող բազմաթիվ գործոնների շարքում կարևորագույն դերակատարություն են հատկացնում ինստիտուտներին. սրա վերաբերյալ են խոսում, օրինակ Տ.Աճեմօղլոն, Ջ.Ռոբինսոնը և Ջոնսոնը իրենց հայտնի «Ինստիտուտները որպես երկարաժամկետ տնտեսական աճի հիմնապատճառ» աշխատության մեջ7: Հատկապես վերջին տարիներին թեմատիկ պարբերականներում (օրինակ՝ Jurnal ofopen innovations, Journal of Innovation Economics & Management, Economics of Innovation and New Technology և այլն) տնտեսագետները ակտիվորեն քննարկում են տեխնոլոգիաների և ինովացիաների ունեցած տնտեսական դերը: Այս խնդիրները ուսումնասիրող հետազոտողները որոշակի տեղ են հատկացնում տեխնոլոգիական նորարարության և ազգային տնտեսական բարգավաճման միջև կապին: Օրինակ, Քրիստին Քիանի կողմից 1980-2006 թթ. ընթացքում 120 երկրներում իրականացված ուսումնասիրությամբ գնահատվել է,

---

[2] Perez, C. (2020). *Technological Revolutions and Financial Capital*. Edward Elgar Publishing.

[3] Растворцева С. Н., Теоретические аспекты возможности ухода экономики региона от траектории предшествующего развития // Журнал экономической теории, 2018, т. 15, № 4, с. 633–642.

[4] Kannan, P. K., & Li, H. (2017). A micro-level analysis of how digital technologies affect marketing. *Journal of the Academy of Marketing Science*, *45*(1), 24-40.

[5] Brynjolfsson, E., & McAfee, A. (2014). The second machine age: Work, progress, and prosperity in a time of brilliant technologies. W.W. Norton & Company.

[6] 2015. "Why Are There Still So Many Jobs? The History and Future of Workplace Automation." *Journal of Economic Perspectives* 29 (3): 3–30.

[7] Խաչատուրյան Վ., Խաչատուրյան Ա., Բաշխման հարաբերությունների արդի հիմնախնդիրները/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու – 2021) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, էջ 312,

որ Ինտերնետի լայնաշերտ հասանելիության յուրաքանչյուր 10 %ով ավելացումը ավելացնում է բարձր եկամուտ ունեցող երկրի համախառն ներքին արդյունքը 1.3 %ային կետով և 1.21 %ային կետով միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների ՀՆԱ-ն[8]: Բացի այդ, նորարարական էկոհամակարգերի ձևավորումը մեծապես պայմանավորված է պետական քաղաքականությունների արդյունավետությամբ և դինամիկ ձեռնարկությունների կարողություններով[9]:

Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանվել է բիզնես հրեշտակների ցանցերի (BANA, AICA, STAN), ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերի, աշխատանքային տարածքների հասանելիության, ինչպես նաև միջազգային մասնագետների մասնակցությամբ միջոցառումների շնորհիվ[10]: McKinsey Global Institute-ի 2021թվականի զեկույցը մատնանշում է, որ Հայաստանի նման տնտեսություններում ՏՀՏ ոլորտը կարող է դառնալ ՀՆԱ-ի աճի շարժիչ, երբ իրականացվեն կրթական բարեփոխումներ և ներգրավվեն ներդրումներ: Իսկ Համաշխարհային բանկի 2023 թվականի գնահատմամբ՝ Հայաստանի ՏՀՏ ոլորտը ռազմավարական նշանակություն ունի երկրի ապագա զարգացման համար, թեև ոլորտը կանգնած է մասնագիտական կադրերի պակասի մարտահրավերի առաջ[11]:

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են ճանաչողության, վերլուծության և համադրման, դիտման և տրամաբանական, ինչպես նաև համեմատության մեթոդները: Հիմք են հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի, Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող վիճակագրական տվյալների բազաները, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Կառավարության կողմից մշակված ռազմավարությունները: Հետազոտությունն ամբողջական դարձնելու համար հիմք ենք ընդունել փորձագիտական գնահատականներ՝ հայկական և միջազգային հետազոտողների աշխատանքներ, համադրվել են Հայաստանի և տարածաշրջանի երկրների ցուցանիշները, «StartupBlink», «Findexable» «Dealroom.co» և այլն) կողմից հրապարակված զեկույցներն ու տվյալների բազաները, ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքներն ու ՀՀ կառավարության որոշումները և այլ մասնագիտական հրապարակումները:

Վերլուծություն: ՏՏ ոլորտի վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին տասնամյակում ՏՀԶԿ երկրներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտների առաջընթացը զգալիորեն գերազանցել է ընդհանուր տնտեսության աճի տեմպերը: 2013-2023 թվականների ընթացքում ՏՀՏ ոլորտն աճել է մոտ երեք անգամ ավելի արագ, քան ընդհանուր տնտե-

---

[8] Christine Zhen-Wei Qiang, "Telecommunications and Economic Growth," Washington, D.C.: World Bank, unpublished paper.

[9] Mazzucato, M. (2018). *The entrepreneurial state: Debunking public vs. private sector myths*. Penguin Books.

[10] Արշակյան, Ք. (2022). Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները. *Գիտական Արցախ*, (3), 204–222. https://cyberleninka.ru/article/n/the-effects-of-components-and-development-challenges-of-thearmenian-startup-ecosystem/viewer

[11] World Bank. (2023). *Armenia Economic Update: Leveraging the Digital Economy*.

սությունն ըստ ՏՀԶԿ երկրների՝ 2023 թվականին 7,6% աճի միջին տեմպով: Համաշխարհային այս զարգացումներում Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը գնալով ավելի տեսանելի է դառնում: 2024 թվականին ոլորտի շրջանառությունը հասել է 2,3 միլիարդ դոլարի և կազմել երկրի ՀՆԱ-ի մոտ 7%-ը, ինչը հաստատում է նրա կարևոր դերը Հայաստանի տնտեսության զարգացման հենքում[12]: Ոլորտի կողմից վճարված հարկերի ծավալը՝ միայն խոշոր 1000 հարկ վճարողների շրջանակում, 2024 թվականին գերազանցել է 79 միլիոն դոլարը: Գործող տեխնոլոգիական ընկերությունների 35%-ը ունի արտադրական ուղղվածություն: Միևնույն ժամանակ ակտիվանում են տեխնոլոգիական ոլորտի միջազգային համագործակցության և ներդրումային միջավայրի խթանման գործընթացները, որտեղ ամենամեծ ձեռքբերումը NASDAQ բորսայում 2024 թվականին ServiceTitan-ի կողմից IPO–ի իրականացումն էր և «Պլուգ & փլեյ» ընկերության միջոցով երկրում մրցունակ տեխնոլոգիական միջավայրի ձևավորվումը՝ տաղանդավոր մասնագետների և նորարարական գաղափարների ներգրավմամբ[13]: Հայաստանի էկոհամակարգի աճի տեմպը կայուն է ու բացառիկ՝ 45,93%, որն ամենաբարձր ցուցանիշն է առաջատար 35 երկրների շարքում: ՏՏ ոլորտի դրական զարգացումների արդյունքում, դեռ 2000-2022թթ. Հայաստանի տնտեսական աճը (6.2%) 0.7%-ով գերազանցել է բարձր եկամուտ ունեցող երկրների (5.5%) և 2.1%-ով Եվրոպական և Կենտրոնական Ասիայի երկրների (4.1%) համապատասխան ցուցանիշի միջինը[14]: Իր ստարտափ էկոհամակարգի վարկանիշի 54-րդ դիրքով Հայաստանը 2024 թվականին Կենտրոնական Ասիայում զբաղեցնում է առաջին տեղը՝ ունենալով 2,8 անգամ ավելի շատ միավոր, քան Ղազախստանը, որը տարածաշրջանում երկրորդ տեղում է[15]: Հայաստանը ծրագրային ապահովման և տվյալների մշակման ոլորտում աշխարհի 1-ին 40 երկրների շարքում է[16]:

Բիզնեսն այժմ անցնում է ԱԲ փոխակերպման մի փուլի, որը հավասարազոր է, իսկ որոշ դեպքերում գերազանցում է նախորդ դարի կարևորագույն տեխնոլոգիական շրջադարձը: Վերջին երկու տարվա ընթացքում գեներատիվ ԱԲ (GAI) կիրառած կազմակերպությունների 51%-ը ունի 10% եկամտի աճ: Ավելին, բիզնեսի ղեկավարների 88%-ը նշում է, որ ԱԲ ներդրումների ընդլայնումը ընկերության արտադրողականության բարձրացման և գլոբալացման գերակա-

[12] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications էջ 6

[13] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications

[14] World Bank. (2024). *Armenia Country Economic Memorandum concept note*. World Bank.

[15] United Nations Economic Commission for Europe. (2023). *Innovation for sustainable development review: Armenia 2023*. United Nations. https://unece.org/sites/default/files/2023-06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

[16] United Nations Economic Commission for Europe. (2023). *Innovation for sustainable development review: Armenia 2023*. United Nations. https://unece.org/sites/default/files/2023-06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

յություններից մեկն է, չնայած այն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ[17].



Գծապատկեր 1. ԱԲ ներդրումների ընդլայնման դրական ու բացասական կողմերի համեմատական[18]

Կարծում ենք, չնայած բացասական ազդեցություններին, այն կազմակերպությունները, որոնք այսօր ներդնում են ռեսուրսներ ոլորտում, ապագայում կունենան առավել մրցունակ դիրք:

Համաշխարհային տեխնոլոգիական շուկայում հայկական ստարտափները շարունակում են ամրապնդել իրենց դիրքը՝ ներգրավելով մեծ քանակությամբ ներդրումներ: Ոլորտի համար ընդհանուր վենչուրային ֆինանսավորումը 2022թ. կազմել է 200 միլիոն ԱՄՆ դոլար[19]: Թեև 2023-ին այս տեմպը որոշ չափով նվազել է՝ պայմանավորված տարածաշրջանային և գլոբալ անորոշություններով, ոլորտը շարունակում է մնալ ակտիվ, և վենչուրային, և մասնավոր ներդրումների ծավալը կազմել է 265 միլիոն դոլար, ինչը 83%-ով աճել է նախորդ ժամանակահատվածի համեմատ: Կապիտալի ներհոսքը

[17] LinkedIn,Work Change Report, AI Is Coming to Work, January 2025, p.33, https://economicgraph.linkedin.com/content/dam/me/economicgraph/en-us/PDF/Work-Change-Report.pdf,

[18] LinkedIn,Work Change Report, AI Is Coming to Work, January 2025, p.33, https://economicgraph.linkedin.com/content/dam/me/economicgraph/en-us/PDF/Work-Change-Report.pdf,

[19] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications

Հայաստանում խթանում է ոչ միայն ոլորտի աճը, այլև ձեռնարկատիրության զարգացումը: 2023 թվականին, ընդամենը երեք ամսվա ընթացքում, հայկական առաջատար նոր ստարտափներում կատարված միայն մասնավոր ներդրումների ընդհանուր ծավալը հասել է 47 միլիոն դոլարի, ինչը վկայում է միջազգային ներդրողների կողմից Հայաստանի տեխնոլոգիական ներուժի բարձր գնահատականի մասին[20]: 2024-ին հայկական ստարտափները գրանցել են միայն 120 միլիոն դոլարի ներդրումներ՝ Կիպրոսից և ԱՄՆ-ից: Ներդրումների նկատելի նվազումը ոլորտում պայմանավորված է դեպի Ռուսաստան ռելոկանտ ընկերությունների տեղափոխման հետ[21]: Համաշխարհային ստարտափ էկոհամակարգերի ինդեքս 2025» զեկույցում վերլուծվում է հայկական ընկերությունների կողմից տեխնոլոգիաների ընդունման և օգտագործման մակարդակը բիզնես գործընթացներում: Համաձայն զեկույցի ընկերությունը համարվում է տեխնոլոգիա ընդունած, եթե կիրառում է IoT, AI, էլեկտրոնային առևտուր, ERP/CRM համակարգեր կամ ամպային տեխնոլոգիաներ: Բարդ տեխնոլոգիաներ օգտագործող են համարվում այն ընկերությունները, որոնք առաջադեմ թվային լուծումներ են կիրառում հիմնական բիզնես գործընթացներում (օր.՝ մարդկային ռեսուրսների կառավարում, հաշվապահություն, արտադրության պլանավորում, մարքեթինգ), ինչպես նաև իրականացնում են առցանց վաճառքներ: Թվային լուծումներում ՀՀ խոշոր ներդրումները կատարվել են.



Գծապատկեր 2. Արձանագրված խոշոր ներդրումային գործարքները ՀՀ-ում[22]

Այսպիսի զարգացումները վկայում են հայկական ստարտափ էկոհամակարգի արագ աճի և միջազգային ներդրողների վստահության մասին: 2025 թվականի «Global Startup Ecosystem Index» զեկույցի ստարտափ

[20] Նույն տեղում
[21] Central Bank of Armenia. (2023). Financial stability report 2023. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf
[22] Shizune. (n.d.). *Top 30 startup investors in Armenia*. Retrieved December 23, 2025, from https://shizune.co/investors/investors-armenia

էկոհամակարգի վարկանիշային տվյալների պատկերը տարածաշրջանում հետևյալն է.

Աղյուսակ 1

Ստարտափ էկոհամակարգի վարկանիշային պատկերը տարածարջանում[23]

Երկիր	Հորիզոնական	Տարեկան աճ (%)	Դիրքի փոփոխություն
Հայաստան	54	22.76%	+3
Վրաստան	71	7.9	-1
Ադրբեջան	74	24.5	+6
Թուրքիա	39	7	+1

Հայաստանի դիրքը 18 միավորով ու 20 միավորով բարելավ է Վրաստանից և Ադրբեջանից, սակայն 15 միավորով զիջում է Թուրքիային: 2023 թվականին Հայաստանը գլոբալ ֆինտեխ ինդեքսում զբաղեցրել է 34-րդ տեղը: Այդ ժամանակահատվածում ոլորտի եկամուտները գերազանցել են 1.6 միլիարդ ԱՄՆ դոլարը՝ կազմելով ՀՆԱ-ի մոտ 7%-ը, իսկ աշխատատեղերի թիվը գերազանցել է 50,000-ը, ինչը Հայաստանի ֆինտեխի ապագայի համար հուսադրող հեռանկարներ է բացել[24]: Ներկայումս Հայաստանի ֆինտեխ ոլորտի միջին տարեկան աճի տեմպը (CAGR) կազմում է 25%, իսկ մոբայլ բանկային ծառայությունները տարածված են ավելի քան երբևէ. 2023 թվականին թվային վճարումները գերազանցել են 6.8 միլիարդ ԱՄՆ դոլարը, բջջային բանկային ծառայությունների օգտագործումը հասել է 76%-ի՝ համաշխարհային մակարդակում լինելով ամենաբարձրը[25]: 2023 թվականի վերջին ՏՏ ոլորտում աշխատողների թիվը եղել է 33980, ինչը 2022թ-ի տարեսկզբի համեմատ աճել է 12,992-ով կամ 61.9%-ով, ընդ որում՝ աճի 44.2 %ային կետը պայմանավորված է օտարերկրացիների, մասնավորապես, Ռուսաստանի քաղաքացիների ներհոսքով[26]: Արդյունքում, օտարերկրացիների մասնաբաժինը ՏՏ ոլորտի վարձու աշխատողների կառուցվածքում 2022 թվականի 4.1%-ից 2023 թվականին հասել է 27.3%-ի: 2023թ-ի տարեվերջի դրությամբ ոլորտում աշխատող օտարերկրացիների 89%-ը եղել են Ռուսաստանի քաղաքացիներ, 3%-ը՝ Իրանի, 2%-ը՝ Բելառուսի: Դիտարկվող ժամանակահատվածում այս ոլորտում ներգրավված Հայաստանի քաղաքացիների թիվը աճել է շուրջ 3.7

23 World Economic Forum. (2020). The global competitiveness report special edition 2020: How countries are performing on the road to recovery.

[24] Central Bank of Armenia. (2023). *Financial stability report 2023*. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf

[25] Central Bank of Armenia. (2023). *Financial stability report 2023*. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf

[26] ՀՀ Պետական եկամուտների կոմիտե: (2024): ՀՀ ՊԵԿ-ի հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ռազմավարությունների կատարման ընթացքի վերաբերյալ: https://www.src.am/

հազարով՝ վարձու աշխատող չունեցող 2,653 անհատ ձեռնարկատերերի հետ միասին[27]:

Աղյուսակ 2

Հայաստանի ՏՀՏ ոլորտի հիմնական ցուցանիշները (2015–2024)[28]

Տարի	Ստարտափների քանակ	Ներդրումներ (մլն) $	ՏՀՏ արտահանում (մլն) $	ՏՀՏ մասնաբաժին ՀՆԱ-ում (%)
2015	50	10	110	2.5
2016	65	15	130	2.9
2017	80	25	170	3.3
2018	110	40	220	3.8
2019	150	70	280	4.2
2020	200	120	350	4.6
2021	250	180	420	5.0
2022	320	250	500	5.5
2023	400	350	600	6.0
2024	480	420	720	6.3

Նշենք, որ 2024 թվականին գործում էր 1253 ակտիվ ՏՏ ընկերություն, որոնցից 538-ը զբաղվում են սեփական արտադրանքի մշակմամբ, ինչը 59%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ ոլորտում աշխատում է ավելի քան 58700 մարդ, կազմելով Հայաստանի աշխատուժի շուրջ 7%-ը: 2024 թվականին ՏՏ մասնագետների թիվը աճել է միայն 2%-ով, մինչդեռ նախորդ տարիներին արձանագրվել էր երկնիշ աճ[29]: Դա պայմանավորված է օտարերկրյա մասնագետների թվի 12% նվազմամբ: Այս ժամանակահատվածում ՏՏ ոլորտի աշխատակիցների 81.4%-ը Հայաստանի քաղաքացիներ են, ինչը վկայում է երկրի ներքին մարդկային ներուժի ձևավորման մասին: Սակայն աշխատուժը խիստ կենտրոնացված է մայրաքաղաքում՝ 94%-ը, մինչդեռ մարզերում աշխատում է ընդամենը 6%-ը: 2024 թվականին ոլորտի արտադրանքը կազմել է 2.6 միլիարդ դոլար՝ տարեկան 17.3% աճով[30]: Այն 2023թ-ին ընթացիկ գներով կազմել է մոտ 837 միլիարդ դրամ՝ 252 միլիարդ դրամով ավել, քան նախորդ տարի: 2023թ-ին ՏՏ

[27] Central Bank of Armenia. (2023). *Financial stability report 2023*. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf

[28] Shizune. (n.d.). *Top 30 startup investors in Armenia*. Retrieved December 23, 2025, from https://shizune.co/investors/investors-armenia

[29] United Nations Economic Commission for Europe. (2023). Innovation for sustainable development review: Armenia 2023. United Nations. https://unece.org/sites/default/files/2023-06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

[30] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications

ոլորտի շրջանառության կամ 755 միլիարդ դրամ իրացվել է արտաքին շուկայում, իսկ 13%-ը կամ 114 միլիարդ դրամ՝ ներքին շուկայում: Ընդհանուր առմամբ, ԱԱՀ վճարող 3210 տնտեսավարող սուբյեկտ 2023թ-ի ընթացքում արտահանել է ՏՏ արտադրանք կամ ծառայություն, որոնցից 56-ի դեպքում ՏՏ ոլորտը հանդիսանում էր ոչ հիմնական գործունեություն (ընդհանուր շրջանառության մեջ ՏՏ ոլորտի շրջանառությունը 50% կամ ավելի քիչ էր)՝ ընդգծելով ՏՏ ծառայություններում Հայաստանի որպես մատակարարի դերը[31]:

Բերված ցուցանիշները վկայում են կայուն և արագ զարգացող թվային տնտեսության մասին, որը գրավիչ հնարավորություններ է առաջարկում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ներդրողների համար՝ դիրքավորելով Հայաստանը, որպես կայուն և բարձր ներուժ ունեցող ուղղություն տեխնոլոգիական ներդրումների համար: Ոլորտի աճի շարժիչ գործոններից մեկը հանդիսանում է օտարերկրյա ընկերությունների համար ՀՀ-ում մասնաճյուղեր բացելու գրավչությունը՝ էժան և մրցունակ մարդկային ռեսուրսների օգտագործման հնարավորություններով: Մրցակցային բարձր առավելություններ ունեցող տեխնիկական աշխատուժի շնորհիվ ՏՀՏ խոշոր ընկերությունների ու վերազգային կազմակերպությունների համար երկրում նպաստավոր ու շահավետ ներդրումային պայմաններ են ստեղծվում:

Ֆինտեխ ոլորտը տարեկան աճում է 25%-ով, իսկ 2023 թվականին թվային վճարումները գերազանցել են 6.8 միլիարդ դոլարը[32]: Այս աճի պայմաններում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է մի շարք ծրագրեր՝ խթանելու տեղական ու օտարերկրյա բիզնեսների ներգրավվածությունը և ոլորտի կայուն զարգացումը: Գաղափարից՝ բիզնես» և «Ներուժ» ծրագրերը միտված են Հայաստանի տնտեսության տարբեր ճյուղերում Սփյուռքի և տեղական մասնագետների մասնագիտական ներուժի ներդրմանը, աջակցում են ստարտափներին՝ ֆինանսավորելով գաղափարների շուկայականացումը: Հիմնական ոլորտները՝ վճարումներ, վարկավորում, ինսուրտեք, կարողության կառավարում և ռեգթեք, զգալի զարգացում են ստացել, ինչին նպաստել են «Fintech Hub Armenia» նախաձեռնությունը և «DigiTec Expo 2023 Reboot» միջոցառումը: Հայաստանի Կենտրոնական բանկի կարգավորող սանդղակը (sandbox) նույնպես ներգրավել է ավելի քան 90 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ, որը ներառում է համապատասխան պաշտպանիչ մեխանիզմներ՝ հնարավոր ձախողման հետևանքները վերահսկելու և ֆինանսական համակարգի ընդհանուր անվտանգությունն ու կայունությունը պահպանելու համար[33]: Ավելին, Հայաստանը սկսել է ուսումնասիրել բլոկչեյնն ու

[31]Asian Development Bank. (2024). *ADB brief no. 332:* Emerging data center market in Armenia. https://www.adb.org/sites/default/files/publication/1017371/adb-brief-332-emerging-data-center-market-armenia.pdf

[32] Boston Consulting Group & QED. (2023, May). *Global fintech 2023: Reimagining the future of finance*. https://web-assets.bcg.com/66/7e/a36d7eab41e2b4b65c3e687a17f5/bcg-qed-global-fintech-report-2023-reimagining-the-future-of-finance-may-2023.pdf

[33] Central Bank of Armenia. (2023). *Financial stability report 2023*. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf

կրիպտոարժույթները՝ ներդրումներ կատարելով կրիպտոմայնինգի ոլորտում և ներկայումս ակտիվ քննարկումներ են ընթանում կենտրոնական բանկի թվային արժույթի զարգացման հնարավորությունների շուրջ: Հայաստանի բանկերը նույնպես համարվում են ֆինտեխ, որոնք լայն հնարավորություններ ունեն բարելավելու հաճախորդների սպասարկման ծառայությունները և ընդլայնելու թվային կիրառումը: Վերջին տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման և ՓՄՁ-ների աջակցության համատեքստում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում EU4 Business նախաձեռնությունը, որի շրջանակում իրականացվող STAREP ծրագիրը (Strengthening Auditing and Reporting in the Eastern Partnership) նպատակ ունի բարելավել ֆինանսական հաշվառման և հաշվետվողականության համակարգերը՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրամիության և իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից: STAREP-ի ներուժը իրապես ծառայում է Հայաստանի տնտեսական կայուն աճին: Չնայած 2023թ. աջակցություն ստացած ընկերությունների քանակը փոքր-ինչ նվազել է, սակայն նոր աշխատատեղերի գրեթե կրկնապատկումը և եկամուտների աճը վկայում են ծրագրի արդյունավետության մասին:

Աղյուսակ 3

ՓՄՁ-ներին աջակցության գնահատականը ՀՀ-ում[34]

Ցուցիչ	2022 թ.	2023 թ.	Տարեկան փոփոխություն %
Աջակցություն ստացած ՓՄՁ-ների քանակ	6,818	6,116	-10.3
Ստեղծված նոր աշխատատեղեր	9,311	18,294	+96.4
Ստեղծված լրացուցիչ եկամուտ (€)մլն	176	237.5	+35
ՓՄՁ շրջանառության միջին աճ %	36	28.3	-7.7
Արտահանման միջին աճ %	108	6.8	զգալի անկում

EU4Business-ի STAREP ծրագիրը կարևոր ուղի է Հայաստանի ՓՄՁ-ների կայուն զարգացման և միջազգային շուկայի ինտեգրման համար: Այն ապահովում է ֆինանսական թափանցիկության բարձրացում, հաշվետվողականության ամրապնդում և ներդրումային միջավայրի բարելավում: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում գործող ձեռնարկությունների ավելի քան 60%-ը չի կիրառում ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչը կարող է զգալիորեն վնասել նրանց մրցունակությանն ու արտադրողականությանը[35]: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին ՀՀ դրամի արժևորումը էական մարտահրավեր է դարձել ոլորտի մրցունակության համար: 2021-2023թթ.

[34] Central Bank of Armenia. (2023). *Financial stability report 2023*. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf

[35] World Bank. (2023). *Armenia systematic country diagnostic*. World Bank. https://documents1.worldbank.org/curated/en/099710009292318855/pdf/Armenia-Systematic-Country-Diagnostic.pdf

ընթացքում ՀՀ դրամն արժևորվել է 22%-ով ԱՄՆ դոլարի, 29%-ով՝ եվրոյի և 32%-ով ՌԴ ռուբլու նկատմամբ: Հաշվի առնելով, որ SS ընկերությունները իրենց արտադրանքի շուրջ 87%-ն արտահանում են, դրամի արժևորումը զգալիորեն նվազեցրել է նրանց մրցունակությունը միջազգային շուկայում: Այս իրավիճակը բացասաբար է անդրադարձել ինչպես տեղական, այնպես էլ Հայաստան տեղափոխված ընկերությունների վրա: 2024 թվականին ոլորտի ակտիվ գործունեություն իրականացնող 1253 ընկերություններից 538-ը (35%) արտադրական ոլորտում են, իսկ 715ը(35%)՝ ծառայությունների[36]: Դրանցից 261-ը-(21%) իրենց գործունեությամբ տեղափոխված են Հայաստան, իսկ 992(21%) ունեն հայկական ծագում, որոնք ապահովում են բարձր աշխատավարձով 58 700 աշխատատեղ, ինչը կազմում է Հայաստանի ընդհանուր աշխատուժի մոտ 7%-ը[37]: Ոլորտում գործող 653 փոքր SS ընկերությունում ներկայումս աշխատում է 1-10 մասնագետ, որից 9 ընկերություններում աշխատում է ավելի քան 500 մարդ[38]: 2023 թվականին պատկերը հետևյալն էր՝



2023թ-ի դեկտեմբերի դրությամբ SS ոլորտում գործող **7,813** տնտեսավարող սուբյեկտներից (ԱՁ, ՍՊԸ և այլն) 1,609 ունեցել են 1-4 վարձու աշխատող, 964-ը ունեցել են 5-50 աշխատող, իսկ 250 և ավել աշխատող ունեցել են ընդամենը 17 ընկերություն:

Ընդ որում ամենախոշոր գործատու **17** ընկերություններից 6-ը ՌԴ-ից ռելոկացված ընկերություններ են:

2023թ-ի վերջին SS ոլորտում գործում էին վարձու աշխատող չունեցող **4,834** անհատ ձեռնարկատեր:

Գծապատկեր 3. SS ոլորտի ձեռնարկությունների թիվը, 2023թ.[39]

Տեխնոլոգիական ոլորտում ծառայություններից դեպի արտադրանքին ուղղված էկոհամակարգի ձևավորումը խթանելու նպատակով, ՀՀ կառավարությունը սահմանել է մի շարք հարկային խթաններ: Իսկ հարկային վարչարարության արդյունավետության գնահատման համաշխարհային ճանա-

[36] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications, էջ 5
[37] Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). *Armenian IT sector report 2024*. Retrieved from https://www.hightech.am/en/publications, էջ 6
[38] Նույն տեղում, էջ 7
[39] Asian Development Bank. (2024). *ADB brief no. 332: Emerging data center market in Armenia*. https://www.adb.org/sites/default/files/publication/1017371/adb-brief-332-emerging-data-center-market-armenia.pdf

չում ունեցող (Tax Administration Diagnostic Assessment Tool) գործիքը աջակցում է հարկային վարչարարության ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման, թույլ կողմերի հայտնաբերման և նպատակային բարեփոխումների մշակման, բարեփոխումների ծրագրավորման և առաջնահերթությունների սահմանման գործընթացում[40]: Վերջին տարիներին TADAT գործիքը լայնորեն կիրառվել է մի շարք երկրներում, որոնց փորձը կարող է լինել կարևոր ուղենիշ նաև մյուս պետությունների համար: Օրինակ՝ Վրաստանում իրականացված գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ հարկային համակարգը զգալի առաջընթաց է գրանցել, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և հարկ վճարողների սպասարկման ոլորտներում[41]: ՀՀ կառավարության եկամուտների կառավարման 2022-2025 թվականների ծրագրով բարձր տեխնոլոգիաների ոլորտում 90% շրջանառություն ձևավորած կազմակերպությունները, հետազոտական և փորձարարական զարգացման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները իրավունք ունեն օգտվելու հարկային արտոնություններից: Այս քաղաքականությունը միտված է խթանել գիտահենք արտադրանքի ստեղծումը և բարձրացնել մրցունակությունը տեխնոլոգիական շուկայում: Միևնույն ժամանակ, փոքր ձեռնարկությունները, որոնք բավարարում են սահմանված չափանիշներին, կարող են օգտվել շրջանառության հարկի նվազեցված 1% դրույքաչափից, ինչը հնարավորություն է տալիս նվազեցնել հարկային բեռը և ռեսուրսներն ուղղել գիտելիքի ու կարողությունների զարգացման նախաձեռնություններին: Շահութահարկ վճարող կազմակերպությունները համախառն եկամտից կարող են նվազեցնել մասնագիտական աշխատանքի մասով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 200 %ը՝ անկախ այդ գումարը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Տեղում մասնագիտական աշխատանքներ կատարող անձնակազմին վճարվող աշխատավարձից և այլ վճարումներից պահվող եկամտային հարկը հաշվարկում է 10 % դրույքաչափով: Բացի դրանից, գործում են նպատակային հարկային վերադարձի մեխանիզմներ՝ փոխհատուցում նոր աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 %ի չափով այն ընկերությունների համար, որոնք առաջին անգամ աշխատանքի են ընդունում SS ոլորտ մուտք գործող անձանց, ոլորտում ներգրավում են հաշմանդամություն ունեցող անձանց: Նոր աշխատողներ են համարվում առաջին անգամ բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած և մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողները: Իսկ աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրեր իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին աջակցությունը տրամադրվում է վերապատրաստում անցած աշխատողի աշխատա-

[40] International Monetary Fund. (2025, August 21). *IMF at a glance*. Retrieved August 21, 2025, from https://www.imf.org/en/About/imf-at-a-glance

[41] Intra-European Organisation of Tax Administrations (IOTA): https://www.iota-tax.org/news/tadat-performance-assessment-conducted-in-georgia

վարձի և այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի 50 %ի չափով: 2023թ ՏՏ ոլորտի ընկերությունները վճարել են շուրջ 134 մլրդ 594 մլն դրամ հարկեր, որը կազմում է հարկային եկամուտների ու տուրքերի 6%-ը, ինչը 51%-ով ավելի է նախորդ տարվա վճարած հարկերից: 2024թ 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված տեխնոլոգիական ընկերությունները Հայաստանի պետական բյուջե են ներդրել 79 միլիոն դոլար, ինչը զգալի գումար է այս զարգացող ոլորտի համար[42]: Միջազգային վարկանշային գնահատականով Հայաստանն հարկային բեռով զբաղեցնում է 64-րդ տեղը՝ 22,51% ցուցանիշով: Շահութահարկի դրույքաչափով Հայաստանը զբաղեցնում է 158-րդ տեղը, որը ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից՝ 24,1%, իսկ եկամտային հարկի 21% դրույքաչափը համաշխարհային միջին ցուցանիշից՝ 30.3%[43]: Այս ցուցանիշների բարելավումը ոլորտի աճի հեռանկարների, ներդրումների խթանման և հետագա զարգացման ռազմավարության մշակման համար կարևոր գործիքակազմ է:

Այսպիսով, ստարտափների վրա հիմնված ռազմավարությունը կարող է Հայաստանը վերածել տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոնի, եթե իրականացվեն կրթական բարեփոխումներ, ներդրումային աջակցություն և միջազգային համագործակցությունների ընդլայնում:

ՏՏ-ի ոլորտի գլոբալ մրցունակության բարձրացման համար կարևոր է.

- գլոբալ աշխարհաքաղաքական ցնցումների պայմաններում ունենալ սեփական զարգացման մոդելը՝ հաշվի առնելով սեփական տնտեսության հիմնական առավելություններն ու հնարավորությունները
- կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրի իրակա-նացմամբ սկսնակ մասնագետներին տեխնոլոգիական ոլորտում պրակտիկա անցնելու հնարավորություն ընձեռել՝ կենտրոնանալով մարզերի վրա
- մշակել կառավարության կողմից աջակցվող հատուկ, վերականգնվող համաֆինանսավորման սխեմաներ՝ աջակցելու համար ընկերությունների մասնակցությամբ վերապատրաստման հատուկ կենտրոնների հիմնադրմանը
- հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ընդլայնելու նպատակով տարբեր ձևաչափերով համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների միջև, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել ինչպես սփյուռքի մասնագիտական ներուժն ու կարողությունները, այնպես էլ ունեցած հնարավորություններն ու կապերը
- ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով

[42] United Nations Economic Commission for Europe. (2023). Innovation for sustainable development review: Armenia 2023. United Nations. https://unece.org/sites/default/files/2023-06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

[43] United Nations Economic Commission for Europe. (2023). Innovation for sustainable development review: Armenia 2023. United Nations. https://unece.org/sites/default/files/2023-06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հեղինակավոր աքսելերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին

- աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G (կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն երկրները, որոնք ունեն հարաբերականորեն կայացած ինստիտուցիոնալ միջավայր, աչքի են ընկնում տեխնոլոգիաների փոփոխության ինտենսիվությամբ:

Եզրակացություն: Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը դինամիկ զարգացում է ապրում և ունի արտահանման մեծ ներուժ: Աճի հիմնական խթանները մարդկային կապիտալն է, սփյուռքի և միջազգային ներդրողների ներգրավումը: Միևնույն ժամանակ առկա են մարտահրավերներ՝ տաղանդների արտահոսք, ներդրումային միջավայրի սահմանափակումներ, գլոբալ մրցակցության սրացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արշակյան, Ք. (2022). Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները. Գիտական Արցախ, (3), 204–222. https://cyberleninka.ru/article/n/the-effects-of-components-and-development-challenges-of-thearmenian-startup-ecosystem/viewer
2. Խաչատուրյան Վ., Խաչատուրյան Ա., Բաշխման հարաբերությունների արդի հիմնախնդիրները/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու – 2021) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, էջ 312,
3. ՀՀ Պետական եկամուտների կոմիտե: (2024): ՀՀ ՊԵԿ-ի հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ռազմավարությունների կատարման ընթացքի վերաբերյալ: https://www.src.am/
4. Растворцева С. Н., Теоретические аспекты возможности ухода экономики региона от траектории предшествующего развития // Журнал экономической теории, 2018, т. 15, № 4, с. 633–642.
5. "Why Are There Still So Many Jobs? 2015. The History and Future of Workplace Automation." Journal of Economic Perspectives 29 (3): 3–30.
6. Asian Development Bank. (2024). ADB brief no. 332: Emerging data center market in Armenia. https://www.adb.org/sites/default/files/publication/1017371/adb-brief-332-emerging-data-center-market-armenia.pdf
7. Autor, David H. 2015. "Why Are There Still So Many Jobs? The History and Future of Workplace Automation." Journal of Economic Perspectives 29 (3): 3–30.

8. Baldwin, R. (2019). *The Globotics Upheaval: Globalization, Robotics, and the Future of Work*. Oxford University Press.
9. Boston Consulting Group & QED. (2023, May). Global fintech 2023: Reimagining the future of finance. https://web-assets.bcg.com/66/7e/a36d7eab41e2b4b65c3e687a17f5/bcg-qed-global-fintech-report-2023-reimagining-the-future-of-finance-may-2023.pdf
10. Brynjolfsson, E., & McAfee, A. (2014). The second machine age: Work, progress, and prosperity in a time of brilliant technologies. W.W. Norton & Company.
11. Central Bank of Armenia. (2023). Financial stability report 2023. https://www.cba.am/en/pperiodicals/stability_report_2023.pdf
12. Christine Zhen-Wei Qiang, "Telecommunications and Economic Growth," Washington, D.C.: World Bank, unpublished paper.
13. Enterprise Armenia. (n.d.). Information and communication technologies. Retrieved July 14, 2025, from https://enterprisearmenia.am/business-opportunities/sector/information-and-communication-technologies/
14. International Monetary Fund. (2025, August 21). IMF at a glance. Retrieved August 21, 2025, from https://www.imf.org/en/About/imf-at-a-glance
15. Intra-European Organisation of Tax Administrations (IOTA): https://www.iota-tax.org/news/tadat-performance-assessment-conducted-in-georgia
16. Kannan, P. K., & Li, H. (2017). A micro-level analysis of how digital technologies affect marketing. Journal of the Academy of Marketing Science, 45(1), 24-40.
17. LinkedIn,Work Change Report, AI Is Coming to Work, January 2025, p.33, https://economicgraph.linkedin.com/content/dam/me/economicgraph/en-us/PDF/Work-Change-Report.pdf,
18. Mazzucato, M. (2018). The entrepreneurial state: Debunking public vs. private sector myths. Penguin Books.
19. Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia. (2024). Armenian IT sector report 2024. Retrieved from https://www.hightech.am/en/publications
20. OECD. (2021). OECD digital economy outlook 2021. Paris: OECD Publishing. https://doi.org/10.1787/7090f5c0-en
21. Perez, C. (2020). *Technological Revolutions and Financial Capital*. Edward Elgar Publishing.
22. Shizune. (n.d.). Top 30 startup investors in Armenia. Retrieved December 23, 2025, from https://shizune.co/investors/investors-armenia
23. UNCTAD. (2022). Technology and innovation report 2022: Frontier technologies for sustainable development. Geneva: United Nations.
24. United Nations Economic Commission for Europe. (2023). Innovation for sustainable development review: Armenia 2023. United Nations. https://unece.org/sites/default/files/2023 06/UNECE_Innovation_for_Sustainable_Development_Review_Armenia_2023.pdf

25. World Bank. (2020).World development report 2020: Trading for development in the age of global value chains. Washington, DC: World Bank.
26. World Bank. (2023). Armenia Economic Update: Leveraging the Digital Economy.
27. World Bank. (2023). Armenia systematic country diagnostic. World Bank. https://documents1.worldbank.org/curated/en/099710009292318855/pdf/Armenia-Systematic-Country-Diagnostic.pdf
28. World Bank. (2024). Armenia Country Economic Memorandum concept note. World Bank.
29. ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/sv_02_25a_420.pdf

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈԼՈՐՏԸ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԼԻԼԻԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը, արհեստական բանականության կիրառությունները և թվային ծառայությունների գլոբալիզացիան փոխում են համաշխարհային տնտեսության կառուցվածքը: Այս համատեքստում Հայաստանի տեխնոլոգիական ոլորտը դիտարկվում է որպես տնտեսության աճի շարժիչ և միջազգային մրցունակության կարևորագույն գործոն:

Տնտեսության հետ տեխնոլոգիայի փոխհարաբերությունների խնդիրը ավելի արդիական է դառնում, քանի որ այն ավելի համակարգված ու համալիր մոտեցում է պահանջում, թե տեսական-մեթոդաբանական ապահովման, և թե գործնական քաղաքականության իրականացման տեսանկյունից, որով պայմանավորված է հոդվածի արդիականությունը:

Հոդվածի նպատակը: Գնահատել Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի ներկա իրավիճակը գլոբալ զարգացումների համատեքստում և առաջարկել ուղղություններ, որոնք կարող են բարձրացնել Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի մրցունակությունը միջազգային մակարդակում:

Նպատակի լուծման համար դրվել են հետևյալ **խնդիրները.**

- համեմատական գնահատական տալ տարածաշրջանային և գլոբալ միտումների համատեքստում.
- ներկայացնել ստարտափների դերը և ազդեցությունը Հայաստանի միջազգային վարկանիշի վրա.
- վերլուծել Հայաստանի ՏՀՏ և ստարտափ էկոհամակարգի աճի դինամիկան.
- բացահայտել պետական քաղաքականության, կրթության և ներդրումային միջավայրի դերակատարությունը:

Մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են գիտական ճանաչողության, վերլուծության և համադրման, դիտման և տրամաբանական, ինչպես նաև համեմատության մեթոդները: Հիմք են հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի, Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող վիճակագրական տվյալների բազաները, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Կառավարության կողմից մշակված ռազմավարությունները: Հետազոտությունն ամբողջական դարձնելու համար հիմք ենք ընդունել փորձագիտական գնահատականներ՝ հայկական և միջազգային հետազոտողների աշխատանքներ, համադրվել են Հայաստանի և տարածաշրջանի երկրների ցուցանիշները:

Ստացված արդյունքները: ՀՀ ՏՀՏ ոլորտի և ստարտափ էկոհամակարգի զարգացումը ոչ միայն խթանում է Հայաստանի տնտեսական աճը, այլև ձևավորում է նոր սոցիալ-տնտեսական մոդել, որը հիմնված է գիտելիքահեն ու բարձր տեխնոլոգիական արժեք ստեղծող ռեսուրսների ու նոր տնտեսական հարաբերությունների վրա: Գլոբալ աշխարհաքաղաքական ցնցումների պայմաններում երկիրը պետք է ունենա սեփական զարգացման մոդելը՝ հաշվի առնելով իր տնտեսության հիմնական առավելություններն ու հնարավորությունները:

Բանալի բառեր: Գլոբալ ինովացիոն ինդեքս, տեղեկատվական հեղափոխություն, Գլոբալ զարգացումներ, ինովացիոն հնարավորություններ:

ТЕХНОЛОГИЧЕСКИЙ СЕКТОР АРМЕНИИ В КОНТЕКСТЕ ГЛОБАЛЬНЫХ РАЗВИТИЙ

ЛИЛИК БЕГЛАРЯН

Аннотация

Актуальность статьи: Быстрое развитие информационных и коммуникационных технологий, приложений искусственного интеллекта и глобализация цифровых услуг меняют структуру мировой экономики. В этом контексте технологический сектор Армении рассматривается как двигатель экономического роста и важнейший фактор международной конкурентоспособности. Проблема взаимосвязи технологий с экономикой становится все более актуальной, поскольку она требует более систематического и комплексного подхода как с точки зрения теоретико-методологического обеспечения, так и с точки зрения реализации практической политики, что обусловлено актуальностью статьи:

Цель статьи: Оценить текущую ситуацию в технологическом секторе Армении в контексте глобальных событий и предложить направления, которые могут повысить конкурентоспособность технологического сектора Армении на международном уровне. Для решения поставленной цели были поставлены следующие задачи:

- дать сравнительную оценку в контексте региональных и глобальных тенденций;
- представить роль и влияние стартапов на международный рейтинг Армении;
- проанализировать динамику роста ИКТ и стартап-экосистемы Армении;
- определить роль государственной политики, образования и инвестиционной среды.

Методология: В ходе исследования использовались методы научного познания, анализа и сопоставления, наблюдения и логики, а также сравнения. Основой послужили статистические базы данных, предоставляемые Центральным банком РА, Национальной статистической службой, стратегии разработанные Министерством высокотехнологичной промышленности и Правительством РА. Для завершения исследования за основу взяты экспертные оценки-работы армянских и международных исследователей, сопоставлены показатели Армении и стран региона:

Полученные результаты: Развитие сектора ИКТ и стартап-экосистемы Армении не только стимулирует экономический рост Армении, но и формирует новую социально-экономическую модель, основанную на ресурсах, основанных на знаниях и создающих высокотехнологичную ценность, и новых экономических отношениях. В условиях глобальных геополитических потрясений страна должна иметь собственную модель развития, учитывающую ключевые преимущества и возможности своей экономики.

Ключевые слова: Глобальный инновационный индекс, информационная революция, глобальные развития, инновационные возможности.

ARMENIA'S TECHNOLOGY SECTOR IN THE CONTEXT OF GLOBAL DEVELOPMENTS

LILIK BEGLARYAN

Abstract

The Relevance of the Article: The rapid development of information and communication technologies, the use of artificial intelligence, and the globalization of digital services are changing the structure of the global economy. In this context, Armenia's technology sector is seen as an engine of economic growth and an important factor in international competitiveness. The problem of the relationship between technology and economics is becoming increasingly relevant, as it requires a more systematic and integrated approach both from the point of view of theoretical and methodological support and from the point of view of practical policy implementation, which is due to the relevance of the article.

The Research Goal: To assess the current situation in the Armenian technology sector in the context of global developments and suggest areas that can enhance the competitiveness of the Armenian technology sector internationally. To achieve this goal, the following tasks were set:

- to analyze the growth dynamics of the ICT and startup ecosystem in Armenia,
- to provide a comparative assessment in the context of regional and global trends,
- to present the role and impact of startups on Armenia's international ranking,
- to identify the role of public policy, education, and the investment environment.

Methodology: The research applied the methods of scientific cognition, analysis and comparison, observation and logic, as well as comparison. It is based on statistical databases provided by the Central Bank of the Republic of Armenia, the National Statistical Service, and strategies developed by the Ministry of High-Tech Industry and the Government of the Republic of Armenia. The theoretical and methodological basis for the research was also provided by foreign and domestic professional literature. A comparative analysis of the growth rates of startups in recent years has been conducted., The experience of successful Armenian startups was studied. To complete the study, we took as a basis the expert assessments of the work of Armenian and international researchers, compared the indicators of Armenia and the countries of the region.

Main Research Findings: The development of the ICT sector and the startup ecosystem in Armenia not only stimulates Armenia's economic growth, but also forms a new socio-economic model based on knowledge-based resources that create high-tech value, and new economic relations. In the context of global geopolitical upheavals, a country must have its own development model that takes into account the key advantages and capabilities of its economy.

Keywords: Global innovation Index, information revolution, global events, innovative opportunities.